«Վանաձորի երեխաների խնամքի և
պաշտպանության N1 գիշերօթիկ
հաստատություն» ՊՈԱԿ

" Ванадзорский интернат N1
по уходу и защите детей"
ГНКО

ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր,
Տարոն-4, Մեքենաշինության թաղ.

РА, Лорийский регион, г. Ванадзор,
Тарон-4, микрорайон Мекенашинутян

հեռ. тел. (374-322) 6-07-51 E-mail: vexpN1gh@rambler.ru

62

«04» մարտի 2015թ.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ
ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀՆԱՐԱՎՈՐ
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ

Հարգելի՛ մասնակից

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N1 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքներ:

Սույն հրավերի ծածկագիր է հանդիսանում՝ ՎԵԽՊԳ-ՇՀԱՊՁԲ-11/4-2015 :

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել «Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N1 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ, ք. Վանաձոր, Տարոն 4, Մեքենաշինության թաղամաս հասցեով, մինչև 2015թ. մարտի 17-ը, ժամը 11:00-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Վ. Մեսրոպյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն «Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N1 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ի շենքում, ք. Վանաձոր, Տարոն 4, Մեքենաշինության թաղամաս հասցեով, 2015թ. մարտի 17-ը, ժամը 11:00-ին:

Գնման առարկա է հանդիսանում «Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N1 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ի կարիքների համար դեղամիջոցների ձեռքբերումը:

«Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N1 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ի կարիքների համար դեղամիջոցների մատակարարման (որոնք կազմված են 66 չափաբաժիններից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկային մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացվում է սույն ծանուցմանը կից:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված 5), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված 5.1): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

«Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N1 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ի էլեկտրոնային հասցեն է vexpN1gh@rambler.ru :

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

-նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները.

- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասկանցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն, համաձայն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Հարգանքով՝

Տնօրեն Հ. Ներկարարյան

Հավելված 5
Օրինակելի ձև

ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4 ծածկագրով
ընթացակարգի հրավերի

ՎԵՀՊԳ-ՇՀԱՊՁԲ-11/4-2015 ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՆԱԿՑԵԼՈՒ ԴԻՄՈՒՄ

_____-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը
Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N1 գիշերօթիկ հաստատություն ՊՈԱԿ-ի կողմից ՎԵՀՊԳ-ՇՀԱՊՁԲ-11/4-2015 ծածկագրով հայտարարված ընթացակարգի _____
չափաբաժնի (չափաբաժինների) համարը

չափաբաժնին և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:
_____-ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի
Ընթացակարգի մասնակցի անվանումը
Կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների.
2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

_____-ն հայտնում և հավաստում է, որ չունի գերիշխող
Ընթացակարգի մասնակցի անվանումը
դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

_____-ն էլեկտրոնային փոստի հասցեն է՝ _____
Ընթացակարգի մասնակցի անվանումը

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____2015թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 5.1

Օրինակելի ձև

ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4 ծածկագրով
ընթացակարգի հրավերի

ՎԵԽՊԳ-ՇՀԱՊՁԲ-11/4-2015 ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆԻ ԱՌԱՋԱՐԿ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված ՎԵԽՊԳ-ՇՀԱՊՁԲ-11/4-2015 ծածկագրով ընթացակարգի հրավերը (ծանուցումը), այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը,
_____-ն առաջարկում է պայմանագիրը կատարել
Ընթացակարգի մասնակցի անվանումը
համաձայն հետևյալ գների՝

(ՀՀ դրամ)

Չափաբաժինների համարները	Գնման առարկայի անվանումը	Արժեք*	ԱԱՀ*	Պայմանագրի կատարման համար առաջարկվող գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1				
2				
….				

* 3-րդ սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:
**Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____2015թ.

Նախագիծ

ԴԵՂԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՎԵՀՊԳ-ՇՀԱՊՁԲ-11/4-2015

ք. Վանաձոր __ մարտի 2015թ.

'Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N1 գիշերօթիկ հաստատություն' ՊՈԱԿ-ը, ի դեմս կազմակերպության տնօրեն Հ. Ներկարարյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ) մի կողմից և _____-ն ի դեմս տնօրեն _____(այսուհետև՝ Մատակարար) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Մատակարարը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետև՝ Պայմանագիր), սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված տեսակի դեղամիջոցներ (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

2. Մատակարարման պայմանները

2.1 Մատակարարն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ժամկետներում և քանակներով:

2.2 Մատակարարը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեներով:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Մատակարարի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատճաշ որակի՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Մատակարարից վճարելու սույն պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում սույն պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Մատակարարի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Մատակարարից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Մատակարարից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Մատակարարի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Մատակարարն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Մատակարարի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

3.1.8 Հննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Մատակարարին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Մատակարարի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Մատակարարին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Մատակարարին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Մատակարարին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Մատակարարին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Մատակարարն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Մատակարարը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Մատակարարը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Սույն պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Մատակարարին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3.4.12 Գնորդին ներկայացնել Ապրանքի ձեռքբերումը կամ ներմուծումը հավաստող փաստաթղթի բնօրինակը և պատճենը՝ բացառությամբ, եթե Ապրանքի ձեռքբերման գործընթացում առկա են մի քանի միջնորդ կազմակերպություններ:

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրով Մատակարարի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ _____ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Մատակարարի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Մատակարարն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Մատակարարի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N3-ով, նախատեսված ամսում, /հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ մինչև հաջորդ ամսվա 30-ը/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են:

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Մատակարարը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

5.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվաան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Մատակարարը պարտավոր է իր հաշվին,Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Պայմանագրի կամ դրա մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Մատակարարի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետև՝ արձանագրություն) ստորագրմամբ: Մատակարարը՝ Ապրանքի հանձնման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4):

6.2 Արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները:

բ) Մատակարարի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Մատակարարին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Մատակարարը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Մատակարարի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Սույն պայմանագրի 1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Մատակարարից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.4 Սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Մատակարարին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

9.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

9.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Մատակարարը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Մատակարարին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Մատակարարի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Մատակարարը պարտավոր

է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) սույն պայմանագրով նախատեսված շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

9,5 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

9,6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

9,7 Սույն պայմանագիրը և հավելվածները կազմված են __ էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, 2, 3 և 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9,8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9,9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Հավելված 4
“.....” ..... 201_թ. կնքված N ՎԵԽՊԳ-ՇՀԱՊՁԲ-11/4-2015
ծածկագրով գնման պայմանագրի

Գնորդ	Մատակարար
_____	_____
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը_____	գտնվելու վայրը_____
հհ_____	հհ_____
_____	_____
հվհհ_____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«__» «_____» 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ «_____ »

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «__ » «_____» 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Գնորդն, ի դեմս_____ և Մատակարարն՝ ի դեմս_____, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Մատակարարը «__» «_____» 20 թ-ից «__» «_____» 20 թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ Մատակարարումները

Գնման առարկայի համառոտ նկարագիրը	Գնման առարկայի քանակական ցուցանիշը	Ապրանքի մատակարարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը	----------	----------		----------

Վերոհիշյալ ապրանքի մատակարարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
ազգանուն_____	ազգանուն_____
Կ.Տ	Կ.Տ

ՀԱՅՏ

'Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության N1 գիշերօթիկ հաստատություն' ՊՈԱԿ-ի կարիքների համար 2015թ. առողջապահական և լաբորատոր նյութերի գնման

Մատակարարման վայրը՝ ՀՀ, ք. Վանաձոր, Տարոն 4, Մեքենաշինության թաղամաս

Մատակարարման ժամկետը՝ սկս. պայմանագրի կնքման օրվանից

Վճարման ժամկետը՝ Հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ մինչև հաջորդ ամսվա 30-ը*

Հ/հ	Գնման առարկան	Տեխնիկական բնութագիրը	չ/մ
1	Ադամանդյա կանաչ 1% 10մլ	Լուծույթ, 1% 10մլ ապակե շիշկ, հայկական արտադրության կամ համարժեք	սրվակ
2	Ամբրոքսոլ 30մգ	Ամբրոքսոլի հիդրոքլորիդ, դեղահատեր, 30մգ (20), բելոռուսական արտադրության կամ համարժեք	հաբ
3	Ամբրոքսոլ 15մգ/5մլ, 100մլ	Ամբրոքսոլ (ամբրոքսոլի հիդրոքլորիդ) օշարակ, 15մգ/5մլ, 100մլ ապակե կամ պլաստիկե շիշկ և չափիչ գդալ, արտասահմանյան արտադրության կամ համարժեք	շիշկ
4	Ամոնյակի լուծույթ 50մլ	Լուծույթ արտաքին կիրառման, սրվ, 50մլ. ապակե շիշկ, հայկական արտադրության կամ համարժեք:	սրվակ
5	Անալգին-Դարնիցա 50% 2 մլ	Մետամիզոիլ նատրիումի, լուծույթ ներարկման, 50% (2մլ), 2մլ ամպուլներ (10), ուկրաինական արտադրության կամ համարժեք	ամպ
6	Ացիկլովիր-Ակրի քսուկ 5% 5գ	Ացիկլովիր, քսուկ, 50մգ/գ, 5գ այլումինե պարկուճ, ռուսական արտադրության կամ համարժեք	պարկուճ
7	Ատամի կաթիլ 10մլ	Լուծույթ ատամնացավի կիրառման, սրվ, 10մլ. պլաստմասե շիշկ, հայկական արտադրության կամ համարժեք:	սրվակ
8	ԱՑՑ 200	Ացետիլցիստեին, դեղահատեր դյուրալույծ, 200մգ, պլաստիկե տարայում (20), գերմանական արտադրության կամ համարժեք	հաբ
9	ԱՑՑ 100	Ացետիլցիստեին, դեղահատեր դյուրալույծ, 100մգ, պլաստիկե տարայում (20), գերմանական արտադրության կամ համարժեք	հաբ
10	Աուգմենտին 375մգ	Ամոքսիցիլին, կալիումի քլավուլանատ , դեղահատեր թաղանթապատ, 375մգ (250մգ+125մգ) (20) արտասահմանյան արտադրության կամ համարժեք	հաբ
11	Աուգմենտին 625մգ	Ամոքսիցիլին, կալիումի քլավուլանատ , դեղահատեր թաղանթապատ, 625մգ (500մգ+125մգ) (14) արտասահմանյան արտադրության կամ համարժեք	հաբ
12	Աուգմենտին 1գ	Ամոքսիցիլին, կալիումի քլավուլանատ , դեղահատեր թաղանթապատ, 1գ (875մգ+125մգ), (14)Միացյալ Թագավորության կամ համարժեք արտադրության	հաբ
13	Բամբակ 50գ	Բժշկական, վիրաբուժական, ոչ ստերիլ բամբակ 50գ., հայկական արտադրության կամ համարժեք	հատ
14	Բենզիլ բենզոատ 20% 100մլ	Բենզիլ բենզոատ, կիթ արտաքին կիրառման, 20% 100մլ շիշկ, հայկական արտադրության կամ համարժեք	սրվակ
15	Բետադին 10% 120մլ	Պովիդոն յոդին, լուծույթ, 10%, 120մլ շիշկ, արտասահմանյան արտադրության կամ համարժեք	լուծույթ
16	Բժշկական սպիրտ 96%	Էթանոլ, լուծույթ արտաքին կիրառման, 100մլ ապակե կամ պլաստիկե շիշկ, հայկական արտադրության կամ համարժեք	սրվակ
17	Բինտ ոչ ախտ. 5x10	Բինտ ոչ ախտ. 5 x 10, հայկական արտադրության կամ համարժեք	հատ
18	Բինտ ոչ ախտ. 7x14	Բինտ ոչ ախտ. 7 x 14, հայկական արտադրության կամ համարժեք	հատ
19	Բինտ ոչ ախտ. 10x16	Բինտ ոչ ախտ. 10 x 16, հայկական արտադրության կամ համարժեք	հատ
20	Բիսեպտոլ 400/80մգ	Սուլֆամեթոքսազոլ, տրիմեթոպրիմ, դեղահատեր, 400մգ+80մգ (20), լեհական արտադրության կամ համարժեք	հաբ
21	Բրոնխոլիտին 125մլ	Օշարակ ,125մլ սրվակ, արտասահմանյան արտադրության կամ համարժեք	սրվակ

22	Դիազոլին 50մգ դրաժե	Մեբհիդրոլին, դրաժե, 50մգ, բլիստերում (10 և 20/2x10/), ուկրաինական արտադրության կամ համարժեք	դրաժե
23	Դիազոլին 100մգ դրաժե	Մեբհիդրոլին, դրաժե, 100մգ, բլիստերում (10 և 20/2x10/), ուկրաինական արտադրության կամ համարժեք	դրաժե
24	Դիմեդրոլ 1% 1մլ	Դիֆենհիդրամին, լուծույթ ներարկման, 1% (1մլ), 1մլ ամպուլներ (10) ուկրաինական արտադրության կամ համարժեք	ամպ
25	Դիմակ	Մեկանգամյա օգտագործման եռաշերտ բժշկական դիմակներ, կապույտ կամ սպիտակ	հատ
26	Էուֆիլին 150մգ	Ամինոֆիլին դեղահատեր, 150մգ, բլիստերում (30/3x10/ և 30/2x15/), ռուսական արտադրության կամ համարժեք	հաբ
27	Լինեքս	Լիոֆիլացված կենդանի կաթնաթթվային մանրէներ, դեղապատիճներ, 280մգ (1.2x107), ապակե տարայում (16), սլովենիական արտադրության կամ համարժեք	դպտճ
28	Լեվոմիկոլ քսուկ 40գ	Դոնդող արտաքին կիրառման, 40 գ ալյումինե պարկուճ, արտասահմանյան արտադրության կամ համարժեք	պարկուճ
29	Կալցիում Դ3 - Վիտամաքս-Ե	Կալցիում Դ3 - Վիտամաքս-Ե հաբեր (50, 100), հայկական արտարության կամ համարժեք	հաբ
30	Կատվախոտի ոգեթուրմ 30մլ	Կատվախոտի ոգեթուրմ, ոգեթուրմ, 30մլ 22հկ, արտասահմանյան արտադրության կամ համարժեք	սրվակ
31	Կատվախոտի էքստրատ 0.02մգ	Կատվախոտի հանուկ, դեղահատեր թաղանթապատ, 20մգ (50), ռուսական արտադրության կամ համարժեք	հաբ
32	Մեզիմ ֆորտե	Պանկրեատին, դեղահատեր թաղանթապատ, (3500ԱՄ լիպազ+ 4200ԱՄ ամիլազ+ 250ԱՄ պրոտեազ) (20), գերմանական արտադրության կամ համարժեք	հաբ
33	Յոդ 5% սպիրտային լուծույթ	Յոդ, լուծույթ, 50մգ/մլ, 30մլ ապակե 22հկ, հայկական արտադրության կամ համարժեք	սրվակ
34	Նարինե 150մգ	Կաթնաթթվային մանրէներ, դեղապատիճ 150մգ (30), հայկական արտադրության կամ համարժեք	դպտճ
35	Նազիվին 0,05% 10մլ քթակաթիլներ	Օքսիմետազոլին (օքսիմետազոլինի հիդրոքլորիդ), քթակաթիլներ, 0,5մգ/մլ, 10մլ ապակե 22հկ, արտասահմանյան արտադրության կյամ համարժեք	սրվակ
36	Ներարկիչ միանվագ 5մլ	Նախատեսված միանվագ օգտագործման համար, 5մլ. տարողությամբ,արտասահմանյան արտադրության կյամ համարժեք	հատ
37	Նիմեսիլ 100մգ	Նիմեսուլիդ գրանուլներ ներքին ընդունման դեղակախույթի, 100մգ, 2գ փաթեթիկներ (9,15 և 30), արտասահմանյան արտադրության կյամ համարժեք	փաթեթ
38	Նո-շպա 40մգ	Դրոտավերինի հիդրոքլորիդ, դեղահատեր, 40մգ (100), Խինոին դեղագործական և քիմիական գործարան , հունգարական արտադրության կամ համարժեք	հաբ
39	Նովոկային 0,5% 2մլ	Պրոկային, լուծույթ ներարկման, 5մգ/մլ, 2մլ ամպուլներ (10) հայկական արտադրության կամ համարժեք	սրվակ
40	Նուրոֆեն թաղանթապատ 200մգ	Իբուպրոֆեն, դեղապատիճներ, 200մգ, բլիստերում (12), նիդերլանդական արտադրության կամ համարժեք	դհտ
41	Շպադել փայտե N100	Չինական արտադրության կամ համարժեք	տուփ
42	Պարա պլյուս 116գ	Պերմեթրին, մալաթիոն, պիպերոնիլ բուտօքսիդ, ցողացիր արտաքին կիրառման, 116գ ալյումինե տարա, արտասահմանյան արտադրության կամ համարժեք	հատ
43	Պարացետամոլ Սոֆարմա օշարակ 120մգ/5մլ	Պարացետամոլ, օշարակ , 120մգ/5մլ, 125մլ սրվակ, բուլղարական արտադրության կամ համարժեք	սրվակ
44	Պարացետամոլ 500մգ	Պարացետամոլ դեղահատեր, 500մգ, բլիստերում (10) հայկական կամ համարժեք արտադրության	դհտ

45	Պարլազին 10մգ	Ցետիրիզին (ցետիրիզինի դիհիդրոքլորիդ), դեղահատեր թաղանթապատ , 10մգ, բլիստերում (10, 30/3x10/),արտասահմանյան կամ համարժեք արտադրության	դիտ
46	Պոլեզին 5մգ	Լևոցետիրիզին (լևոցետիրիզինի երկհիդրոքլորիդ), դեղահատեր թաղանթապատ, 5մգ (7, 10, 14/2x7/, 20/2x10/, 30/3x10/), արտասահմանյան արտադրության կամ համարժեք	հաբ
47	Ջերմաչափ	Ջերմաչափ սնդիկային: Նշանադրումը - Ֆիրմային նշանի առկայությունը: Պայմանական նշանները - 'կոտրվող է':	հատ
48	Ջրածնի պերօքսիդ 3% 100մլ	Լուծույթ արտաքին կիրառման, սրվ, 3% 100մլ. ապակե շշիկ, հայկական արտադրության կամ համարժեք	սրվակ
49	Ռեհիդրոն փոշի 18.9գ	Նատրիումի քլորիդ, կալիումի քլորիդ, նատրիումի ցիտրատ, անջուր գլյուկոզ, դեղափոշի ներքին ընդունման լուծույթի , 18.9գ փաթեթիկներ (20), ֆինլանդիական արտադրության կամ համարժեք	հատ
50	Ռետինե բժշկական ձեռնոցներ	Բժշկական մեկանգամյա օգտագործման ռետինե ձեռնոցներ, ոչ ախտահանած	հատ
51	Սալբուտամոլ 2մգ	Սալբուտամոլ, դեղահատեր, 2մգ (24), հայկական արտադրության կամ համարժեք	հաբ
52	Սմեկտա 3գ	Դիոսմեկտիտ, դեղափոշի խմելու դեղակախույթի, 3գ փաթեթիկ (30), ֆրանսիական արտադրության կամ համարժեք	հատ
53	Սուպրաստին 25մգ	Քլորոպիրամին (քլորոպիրամինի հիդրոքլորիդ), դեղահատեր , 25մգ, բլիստերում (20/2x10/)), հունգարական արտադրության կամ համարժեք	հաբ
54	Սպեղանի բակտերիոցիդ /սանտիավիկ/	N10, չինական արտադրության կամ համարժեք	տուփ
55	Սպեղանի 2.5x500սմ	Սպեղանի 2.5 x 500, հայկական արտադրության կամ համարժեք	տուփ
56	Վերմոքս 100մգ	Մեբենդազոլ դեղահատեր 100մգ, բլիստերում (6) արտասահմանյան արտադրության կամ համարժեք	հաբ
57	Վիշնևսկու բալասանային հեղուկաքսուք 40գ	Ձյութ, քսերոֆորմ, հեղուկաքսուք, 30մգ/գ, 30մգ/գ, 40գ ալյումինե պարկուճ, բելառուսական արտադրության կամ համարժեք	պարկուճ
58	Վոլտարեն Էմուլգել 1% 50գ	Դիկլոֆենակի դիէթիլամին, դոնդող, 1%, 50գ պարկուճ, արտասահմանյան արտադրության կամ համարժեք	պարկուճ
59	Ցիպրինոլ 250մգ	Ցիպրոֆլոքսացին, դեղահատեր թաղանթապատ, 250մգ (10), արտասահմանյան արտադրության կամ համարժեք	հաբ
60	Օլֆեն-50 Լակտաբ	Դիկլոֆենակ (դիկլոֆենակ նատրիում) , դեղահատեր թաղանթապատ, 50մգ, բլիստերում (20/2x10/), շվեյցարական արտադրության կամ համարժեք	հաբ
61	Օմեպրազոլ 20մգ	Օմեպրազոլ, դեղապատիճներ աղելույծ, 20մգ, բլիստերում (14/2x7/, 28/4x7/, 30/3x10/), բուլղարական արտադրության կամ համարժեք	դպտճ
62	Ֆլեմոքսին սոլուտաբ 250մգ	Ամոքսիցիլին (ամոքսիցիլինի տրիհիդրատ), դեղահատեր տարրալուծվող,250մգ, բլիստերում (20/4x5/), նիդերլանդական արտադրության կամ համարժեք	դպտճ
63	Ֆլեմոքսին սոլուտաբ 500մգ	Ամոքսիցիլին (ամոքսիցիլինի տրիհիդրատ), դեղահատեր տարրալուծվող, 500մգ, բլիստերում (20/4x5/), նիդերլանդական արտադրության կամ համարժեք	դպտճ
64	Ֆիլկո-Ամոքսի 500մգ	Ամոքսիցիլին (ամոքսիցիլինի տրիհիդրատ) , դեղապատիճներ, 500մգ, բլիստերում (1000/100x10/), արտասահմանյան արտադրության կամ համարժեք	դպտճ
65	Ֆիլկո-Ամոքսի 250մգ	Ամոքսիցիլին (ամոքսիցիլինի տրիհիդրատ) , դեղապատիճներ, 250մգ, բլիստերում (1000/100x10/), արտասահմանյան արտադրության կամ համարժեք	դպտճ

66	Ֆոսֆալյուգել 20	Ալյումինիումի ֆոսֆատ դոնդող ներքին ընդունման 10400մգ, 16գ փաթեթիկներ (20), արտասահմանյան արտադրության կամ համարժեք	փաթեթ

***Ծանոթություն**

Պարտադիր պայման է հանդիսանում ապրանքի չօգտագործված լինելը:

-Դեղերի փաթեթավորման, պիտակի կամ ուղեկցող փաստաթղթերի վրա պետք է լինի մակնշում, որը բովանդակում է նաև տեղեկություններ դեղի տեղափոխության և պահպանման պայմանների, ինչպես նաև դեղի պիտանիության ժամկետների վերաբերյալ: Ընդ որում՝ դեղի պիտանիության ժամկետները հանձնման պահին պետք է բավարարեն հետևյալ պահանջներին.

ա. 2.5 տարուց ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային պիտանիության ժամկետ,

բ. 2.5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն 2/3-րդը,

գ. մինչև 2 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն 1/2-րդը

դ. առանձին դեպքերում՝ կախված դեղի ընդհանուր պիտանիության ժամկետից, դեղը հանձնման պահին կարող է ունենա դեղի ընդհանուր պիտանիության ժամկետի առնվազն 1/2-ը:

Հավելված N2

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

հազ. դրամ

N ը/4	Պատվիրատուի/ապրանքի անվանումը	Միավորի գինը	Չափման միավորը	Քանակը				Ընդամենը
				2015թ.				
	Գործադիր իշխանության , պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում /արտաբյուջետային միջոցների հաշվին/			I եռամսյակ /մարտ/	II եռամսյակ /ապրիլ/	III եռամսյակ /սեպտեմբեր/	IV եռամսյակ /հոկտեմբեր/	Քանակը
1	Ադամանդյա կանաչ 1% 10մլ		սրվակ			2	1	3
2	Ամբրոքսոլ 30մգ		հաբ	60		80		140
3	Ամբրոքսոլ 15մգ/5մլ, 100մլ		շշիկ	2		3		5
4	Ամոնյակի լուծույթ 50մլ		սրվակ			1		1
5	Անալգին-Դարնիցա 50% 2 մլ		ամպ		10		10	20
6	Ացիկլովիր-Ակրի քսուկ 5% 5գ		պարկուճ		1			1
7	Ատամի կաթիլ 10մլ		սրվակ	3		5		8
8	ԱՑՑ 200		հաբ	60	40			100
9	ԱՑՑ 100		հաբ	20	20	60		100
10	Աուգմենտին 375մգ		հաբ	60	80		60	200
11	Աուգմենտին 625մգ		հաբ	60	72		36	168
12	Աուգմենտին 1գ		հաբ	28	56		14	98
13	Բամբակ 50գ		հատ			5		5
14	Բենզիլ բենզոատ 20% 100մլ		սրվակ			5		5
15	Բետադին 10% 120մլ		լուծույթ	1			1	2
16	Բժշկական սպիրտ 96%		սրվակ		2		1	3
17	Բինտ ոչ ախտ. 5x10		հատ		10		10	20
18	Բինտ ոչ ախտ. 7x14		հատ		5		10	15
19	Բինտ ոչ ախտ. 10x16		հատ		2		3	5
20	Բիսեպտոլ 400/80մգ		հաբ		60		40	100
21	Բրոնխոլիտին 125մլ		սրվակ		1		1	2
22	Դիազոլին 50մգ դրաժե		դրաժե	40			60	100
23	Դիազոլին 100մգ դրաժե		դրաժե		60		40	100
24	Դիմեդրոլ 1% 1մլ		ամպ		10		10	20
25	Դիմակ		հատ			50		50
26	Էուֆիլին 150մգ		հաբ			20		20
27	Լինեքս		դպտճ		48	48		96
28	Լեվոմիկոլ քսուկ 40գ		պարկուճ		2		1	3
29	Կալցիում Դ3 - Վիտամաքս-Ե		հաբ				100	100
30	Կատվախոտի ոգեթուրմ 30մլ		սրվակ	1		2		3
31	Կատվախոտի էքստրատ 0.02մգ		հաբ			100		100
32	Մեզիմ ֆորտե		հաբ				40	40

33	Յոդ 5% սպիրտային լուծույթ		սրվակ		2	2		4
34	Նարինե 150մգ		դպտճ		30			30
35	Նազիվին 0,05% 10մլ քթակաթիլներ		սրվակ		5		5	10
36	Ներարկիչ միանվագ 5մլ		հատ			30		30
37	Նիմեսիլ 100մգ		փաթեթ		30		30	60
38	Նո-շպա 40մգ		հաբ		100			100
39	Նովոկային 0,5% 2մլ		սրվակ	10				10
40	Նուրոֆեն թաղանթապատ 200մգ		դիտ		40		20	60
41	Շպադել փայտե N100		տուփ	2			1	3
42	Պարա պլյուս 116գ		հատ		4		2	6
43	Պարացետամոլ Սոֆարմա օշարակ 120մգ/5մլ		սրվակ		10		6	16
44	Պարացետամոլ 500մգ		դիտ		200		100	300
45	Պարլազին 10մգ		դիտ		40		20	60
46	Պոլեզին 5մգ		հաբ		14		28	42
47	Ջերմաչափ		հատ			2	5	7
48	Ջրածնի պերօքսիդ 3% 100մլ		սրվակ	2			2	4
49	Ռեհիդրոն փոշի 18.9գ		հատ			5		5
50	Ռետինե բժշկական ձեռնոցներ		հատ			50		50
51	Սալբուտամոլ 2մգ		հաբ		24		24	48
52	Սմեկտա 3գ		հատ		30		30	60
53	Սուպրաստին 25մգ		հաբ	20	40		40	100
54	Սպեղանի բակտերիոցիդ /սանտիավիկ/		տուփ		40	40		80
55	Սպեղանի 2.5x500սմ		տուփ		2		2	4
56	Վերմոքս 100մգ		հաբ		6		6	12
57	Վիշնևսկու բալասանային հեղուկաքսուք 40գ		պարկուճ				2	2
58	Վոլտարեն Էմուլգել 1% 50գ		պարկուճ		1		1	2
59	Ցիպրինոլ 250մգ		հաբ		10		20	30
60	Օլֆեն-50 Լակտաբ		հաբ		20		20	40
61	Օմեպրազոլ 20մգ		դպտճ		20			20
62	Ֆլեմոքսին սոլուտաբ 250մգ		դպտճ	20		40	80	140
63	Ֆլեմոքսին սոլուտաբ 500մգ		դպտճ	20		40	100	160
64	Ֆիլկո-Ամօքսի 500մգ		դպտճ		60		40	100
65	Ֆիլկո-Ամօքսի 250մգ		դպտճ		60		40	100
66	Ֆոսֆալյուգել 20		փաթեթ				20	20
ԸՆԴԱՄԵՆԸ								

ԳՆՈՐԴ

ՄԱՏԱԿԱՐԱՐ

Հավելված 3
____ _____ 2015թ. կնքված
_____ գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

/հազ. դրամ/

Ձեռք բերվող ապրանքի անվանումը	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2015թվականի պետական բյուջեից, ընդ որում՝					Ընդամենը տարեկան
		I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	Տարեկան	
1	2	3	4	5	6		7
դեղամիջոցներ	426600				100%	100%	100%

* *Վճարման ժամանակացույցը լրացվում է աճողական*

ԳՆՈՐԴ

_____
ստորագրություն
կ.տ

ՎԱՃԱՌՈՂ

_____
ստորագրություն
կ.տ